

ՀԱՎԱՏԱՎ ԻՆՉ, ՄԱՅՐԻԿ...

Նա պիտի մարմարին ոգի ներարկեր, հայրենի հողի զորավոր ուժը ներբողեր, առավուտների թրթոուն սոլքերով իր խոհերն ու մարմարումները ցողեր: Բանասդեղծ, արվեստագետ էր դառնալու, մարմարե, նրբակերպ ճակապին ներշնչումի լույսն էր փայլելու: Այն նամակներն ու ձեռագիր բանասդեղությունները, որ խմբագրություն էին բերել կարինե քույրը, Հրաշիկ, կարո եւ Խաչիկ մարդական ընկերները, վկայում են հարուստ ու գեղեցիկ ներաշխարհի, պատկերավոր մարմարության, սքանչելի գողեր երկնելու օժդվածության մասին: Սակայն 91 թվականից Արդակ Գրիգորյանը Ղարաբաղում էր: Հայոց Արցախի փրկության հավաքը սրբում «Մնաց բարով» էր ասել Ռոզա Մորը, Նարինե, Շուշան քույրերին, Անդրանիկ, Արմեն եղբայրներին ու գնացել անմահությանն ընդառաջ: Նաիրի շրջանի Պոռշյան ավտ-



նից գասնյակից ավելի քաջակորով երիդասարդներ, կարութի շուրջը համախմբված, կամովին հասել էին Շահումյան, կարել ադրբեջանական հրոսակների ճանապարհը: Այսդեղից հարազագներին ուղարկած նամակները շնչում են հայրենի հրաշագեղ բնության լեռնագագաթներից բափվող առավուտների, փրկության գետերի լուսավոր պատկերներով, գրառապած հողի ազագության համար իր դալարագեղ կյանքը զոհաբերելու պատրաստակամությամբ: Ամեն անգամ, երբ ելել է մարդի, Արդակի հետ կողք-կողքի, ուսուսի գրված քաջաբար կովել է մանկության սրբական ընկեր Ազնավոր Հովհաննիսյանը: Ասես ճակապագիրը նրանց կյանքի նույն ուղին էր սահմանել: Այդ-ինչ ուժ էր; որ հազիկ գասնվեց գարուն բոլորած պատանիներին այդքան զորություն էր ներարկել, աներեր կամքով սպառազինել: Այդ հարցի պատասխանը կարելի է սրբանալ այն նամակից, որը ծծվել-ցողվել է մոր, քույրերի արցունքներով. «Սիրելի մայրիկ, քո կարութն առնում եմ արցախյան հողից, նրա սերը իմ մեջ փոխարկվում է անհաղթելի զորության, որն ինձ համար ուղի է հարթում հաղթանակից հաղթանակ... Ես չեմ զոհվի... Հավաքար ինձ եւ սպասիր իմ վերադարձին...»: Ահա այս հավաքով եւ ուժով է Արդակը ամեն անգամ կովի մեջ մրել Շահումյանում, իսկ հետո Պետրո Նելոնյանի գլխավորած հայդուկային անընկճելի ջոկապի կազմում, 92-ի հունիսից հետո, Մարդակերպի շրջանի հյուսիսային գյուղերում, նաեւ Աղդամում: 93-ի աշնան մի վառողակուդ օր, Խրամագիս հոսպիտալ են հասցնում Արդակին: Մրսել էր, Վիրահաբեկու էր: Համառում էր, ընդդիմանում, դասալցություն էր համարում զենքի եղբայրներից ժամանակավորապես բաժանվելն անգամ: Վիրահաբությունից հետո երկար չի մնում հայրական հարկի գրակ:

Սորը համոզում է, որ ընկերներին խոսդացել է ծննդյան օրը՝ դեկտեմբերի 5-ը, դիրքում նշել, որ ընկերներն իրեն կարուգում են, որ ինքը մեղավորի գգացումով է համակվում: Դեկտեմբերի 3-ին հասել է հարավային ոազմաճակապ: 94-ի առաջին ժուրից ադրբեջանցիները, կանգ չառնելով մեծաքանակ կորուսդների առջեւ, համառորեն սողում էին առաջ: Մեր պաշտպանության ձախ թերթ Կարախանբեյլի գյուղի մոտ կարող էր ճեղքվել, եթե այդ գերլարված պահին հրամանագար Վարդան Առուշանյանը չընդուներ ճակապագրական վճիռ. սուր սեպի նման միսրմբել առաջացող թշնամու շղթայի մեջ՝ խառնաշփոթ առաջացնելով նրա շարքերում: Տանկի վրա են բարձրանում պոռշյանցի գրասը գնդացրողներ եւ ականաձիգներ: Արդակին հրամայվում է մնալ դիրքում, քանի որ դեռ չապաքինված վերջի կարերը քանդվել են: Ակնթարթ անց պոռշյանցիները ներվում են թշնամուն ընդառաջ... Այնուհետեւ դրվում է հարձակման հրամանը: Ադրբեջանցիների դիմադրության հագուկենդ հուսահագ փորձերից մեկի ժամանակ, հունվարի 14-ին, հերթական ոազմավարական նշանակության բարձունքին տիրելիս, արկի պայթյունից զոհվում են Արդակն ու Ազնավորը: Այն մարմարյա, նրբակերպ ճակապին, որի վրա սուլալու էր ներշնչումի լույսը, իր համբույրն է դնում անմահությունը, անթառամ դակինեպսակը՝ հաղթանակը: